

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՕՐՐԱՆ

ՀՏԳ- 941 (479.25):325

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

Շ 973

Գիտաժողովը նվիրվում է

Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Արտակ Մադալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, Վլադիմիր Բարխուդարյան – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Բաբկեն Հարությունյան – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, Աշոտ Մելքոնյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, Ռուբեն Սաֆրաստյան – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Արարատ Աղասյան – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Պավել Ավետիսյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՄՆԻԹԱՐ ԳԱՐԲԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ - ԵՊՀ

**ՎԵՐԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՆԹԱՅ.
ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

Կովկասյան տարածաշրջանում վերջին մեկուկես տասնամյակում արձանագրված հակամարտությունների թիվը մոտենում է մեկ տասնյակի: Դրանցից մի քանիսի (արցախյան, չեչենական, վրաց-հարավօսական, վրաց-աբխազական, օսեթինա-ինգուչական) հետևանքով հարյուր հազարավոր մարդիկ ստիպված լքել են բնակության վայրերը՝ հայտնվելով փախստականի, ներքին տեղահանվածի և այլ կարգավիճակներում¹: Արցախյան հակամարտությունը նույնպես դարձել է բնակչության զանգվածային հարկադրված տեղաշարժերի պատճառ (հիշենք Ադրբեյջանի հայաբնակ վայրերից մի քանի հարյուր հազար փախստականների):

Էթնիկ հակամարտությունները և որպես հետևանք՝ բնակչության զանգվածային տեղաշարժերը հազարավոր մարդկանց համար ձևավորում են որակապես նոր վիճակ: Ցանկացած հակամարտություն, հատկապես եթե այն թևակոխում է զինված բախումների և ռազմական գործողությունների փուլ, հանգեցնում է «արտակարգ իրավիճակի», հանրույթին կամ վերջինիս մի մասին ստիպելով «ապրել» այդ վիճակին բնորոշ կանոններով: Չանգվածային հակամարտությունների

¹ Հակամարտությունների պատմական և քաղաքական առումները առանձին ուսումնասիրության խնդիր են, ուստի սույն հոդվածում դրանց չենք անդրադառնում: Վերաբնակեցումը դիտվում է որպես հասարակական ու մշակութային գործընթաց, որում էթնոսը (վերջինիս մի հատվածը) կիրառում է տարածքի յուրացման, հասարակական հարաբերությունների կառուցման ինչպես «ժամանակակից», այնպես էլ «ավանդական» մեխանիզմներ ու մոտեցումներ:

դեպքում արտակարգ իրավիճակում ուղղակիորեն կամ անուղղակիորեն հայտնվում է ողջ հասարակությունը:

Արդի ազգաբանությունում նման վիճակներին վերաբերող ուսումնասիրությունները բավականին շատ են: Ե՛վ արևմտյան, և՛ ռուսական ազգաբանությունում ակտիվորեն զարգանում են այնպիսի գիտական ուղղություններ, ինչպիսիք են՝ պատերազմի ազգաբանությունը (մարդաբանությունը), բռնության ազգաբանությունը (մարդաբանությունը), սահմանների մարդաբանությունը և այլն²: Հայ ազգաբանությունում այս ուղղությամբ արվում են առաջին փորձերը:

Բնակչության առանձին խմբերի տեղաշարժերի, մշտական կամ ժամանակավոր *վերաբնակության* գործընթացները, կապված էթնիկ հակամարտությունների առանձնահատկությունների հետ, նույնպես կարելի է դիտարկել պատերազմի ազգաբանության համատեքստում:

Տեսականորեն, ամենապարզ մոտեցմամբ, վերաբնակեցումը կարելի է ձևակերպել որպես այնպիսի գործընթաց, որի արդյունքում անհատը (ընտանիքը, հանրույթի մի մասը) կամավոր կամ հարկադրված փոխում է բնակության վայրը:

Վերաբնակության ուղղությունները կարող են լինել տարբեր՝ *էթնիկ հակամարտության տարածքից դուրս* (առկա է կովկասյան տարածաշրջանի բոլոր հակամարտություններում), *էթնիկ հակամարտության տարածքում* (արցախյան հակամարտությունում դա արտահայտվում է առավել վտանգավոր բնակավայրերից դեպի համեմատաբար ապահովներ տեղափոխվելով) և *դեպի հակամարտության տարածք* (նման դեպքեր, որպես կանոն, գրանցվում են հակամարտության ավարտից հետո: Արցախյան հակամարտությունում նման օրինակ են Շուշին և վերաբնակեցված տասնյակ այլ բնակավայրերը):

² Տե՛ս *В. Тишкова*. Общество в вооруженном конфликте: этнография чеченской войны. М., 2001. Антропология насилия (под. ред. В. Бочарова и В. Тишкова). М., 2001.

Վերաբնակության ժամկետները նույնպես էականորեն տարբեր են՝ մի քանի օրից (ամսից) մինչև մի քանի տարի, չնայած հակամարտություններին վերաբերող նյութերը ցույց են տալիս, որ բազմաթիվ դեպքերում վերաբնակվածները կարող են նաև չվերադառնալ:

Վերաբնակության գործընթացի ուսումնասիրության, կիրառական նշանակության ծրագրերի մշակման համար էական է նաև վերաբնակության շարժառիթների/դրդապատճառների ուսումնասիրությունը: Խնդիրն ինքնին բարդ է, բազմամակարդակ, քանի որ վերաբնակության հիմքում, որպես կանոն, ընկած են տարբեր գործոններ՝ *հոգեբանական, տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլ:*

Չափազանց կարևոր է նաև վերաբնակության բուն գործընթացի և բնակության նոր վայրում հարմարվելու մեխանիզմների ուսումնասիրությունը. դրանք համալիր երևույթներ են, ընդ որում, ինչպես ցույց են տալիս Շուշիին վերաբերող նյութերը, որոշ դեպքերում վերաբնակության դրդապատճառները և ադապտացիան կարող են ունենալ տարբեր հիմնավորումներ (վերաբնակության դրդապատճառ կարող է լինել հայրենասիրական մղումը, իսկ տեղում՝ առաջնային դառնալ սոցիալ-տնտեսական գործոնը): Այսինքն՝ վերաբնակությունը տնտեսական, հասարակական, մշակութային, հոգեբանական իրողություն է, բարդ ու բազմամակարդակ, շատ դեպքերում ուղղակիորեն կապված էթնիկ ինքնության ու պատմական հիշողության տարբեր առումների հետ:

Շուշիի՝ որպես արցախյան հակամարտության ընթացքում և դրանից հետո վերաբնակեցված ամենախոշոր բնակավայրի վերաբնակեցման գործընթացի ազգաբանական ուսումնասիրությունը կարևոր է մի քանի առումով: Հասարակական գիտակցության մակարդակում Շուշիի վերաբնակեցումը կարևորվում էր և այսօր էլ շարունակում է կարևորվել տարբեր հիմնավորումներով.

ա) Շուշիի ազատագրումը և վերահայացումը որպես

պատմական արդարության վերականգնում: Նման մոտեցումը կարևոր էր հատկապես ազատագրման անմիջապես հաջորդած շրջանում, երբ քաղաք էին տեղափոխվում նաև վերջինիս հետ նախկինում որևէ առնչություն չունեցած հարյուրավոր անհատներ ու ընտանիքներ: Պատմական արդարության վերականգնման փաստն իր հերթին դառնում էր պատմական հիշողության որոշ հիմնատարների վերախմաստավորման ու վերարժևորման միջոց (Շուշին որպես վերջին մի քանի հարյուր տարում հայերի կողմից ազատագրված առաջին բնակավայր): Նշենք սակայն, որ, ըստ ազգագրական նյութերի ու անձնական դիտարկումների³, այս մակարդակում հիմնավորումներն ավելի շատ զգայականի ու զգացմունքայինի դաշտում էին, ինչի ապացույցն են նաև «Շուշին համայն հայության մայրաքաղաք, մշակութային մայրաքաղաք» դարձնելու առաջիմ անհաջող փորձերը:

բ) Շուշին՝ որպես ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող բնակավայր (Վ. Պոտտոյի հայտնի ձևակերպումը. «ով տիրում է Շուշիին, նա տիրում է Ղարաբաղին»): Խորհրդային շրջանում և արցախյան հակամարտության առաջին տարիներին հիմնականում ադրբեջանաբնակ «դարձված» Շուշին (վերջին հայ բնակիչները քաղաքից արտաքսվեցին 1988–89 թթ.) «գործում էր ընդդեմ հայերի»: հիմնականում այստեղից էին ռմբակոծվում մայրաքաղաք Ստեփանակերտն ու այլ հայկական բնակավայրեր:

գ) Շուշին՝ որպես բնակության համար հարմար վայր: Այս հիմնավորումը նույնպես կարևոր է, քանի որ ի տարբերություն ԼՂՀ այլ բնակավայրերի, որոնցից շատերը լուրջ վնասներ էին կրել պատերազմական գործողությունների արդյունքում, ազատագրումից անմիջապես հետո Շուշիում բար-

³ «Արցախյան պատերազմի ազգագրական ուսումնասիրություն» թեմայի շրջանակներում հեղինակը և Ա. Դաբաղյանը ազգագրական ու վիճակագրական նյութեր են գրառել նաև Շուշիում՝ 1996, 2000, 2002 և 2006 թթ.: Նյութերը պահվում են հեղինակների անձնական արխիվներում:

վոք վիճակում էին ենթակառուցվածքները, պահպանվել էր բնակարանային ֆոնդը, իսկ քաղաքում բնակվելը համեմատաբար անվտանգ էր:

Վերաբնակեցման վերը նշված ուղղություններից Շուշիում արտահայտված էին հիմնականում երկուսը՝ տարածքի ներսում և դեպի հակամարտության տարածք:

1996 թ. քաղաքում բնակվող ընտանիքներից 221-ը շուշեցիներ էին, 302-ը՝ ստեփանակերտցիներ, 222-ը՝ բռնագաղթվածներ Ադրբեջանից, 200-ը՝ տեղահանվածներ ԼՂՀ շրջաններից, 121-ը՝ վերաբնակիչներ Հայաստանից⁴:

Շուշիում հաստատված բոլոր ներթնիկ խմբերի համար մշտական կամ ժամանակավոր վերաբնակությունը պայմանավորող գործոնները հիմնականում վերը նշված ա և գ գործոններն էին:

Շուշին որպես բնակության համար հարմար վայր դիտելը տարբեր խմբերի համար արդեն ուներ իր հիմնավորումները. ստեփանակերտցիները, Ադրբեջանից բռնագաղթվածները, նախկին շուշեցիները տեղափոխվում էին բնակարանային խնդիրը լուծելու, Հայաստանից վերաբնակիչները՝ սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամի ազդեցությունները մեղմելու համար: Ըստ նյութերի՝ վերաբնակիչների գրեթե բոլոր խմբերի համար կարևոր են դիտվել նաև վերաբնակության առաջին շրջանում վերաբնակիչներին տրվող որոշ արտոնությունները: Այսինքն՝ գործ ունենք Շուշիի վերաբնակեցման այնպիսի գործընթացի հետ, երբ այստեղ հաստատվում էին հիմնականում «արտակարգ իրավիճակում» հայտնված ընտանիքներ ու խմբեր: Նրանց մի մասն ուներ բնակարանային խնդիր, մեկ այլ մասը՝ սոցիալ-տնտեսական ճգնաժամի ու այլ իրողությունների արդյունքում կորցրել էր նախկին կարգավիճակն ու հասարակական միջավայրում

⁴ Շուշիի վերաբնակեցման գործընթացների մասին մանրամասն տես Մ. Դաբաղյան, Մ. Գաբրիելյան, Շուշին 1992–2002 թթ. հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազգագրական ակնարկ), Ե., 2004:

ունեցած դերակատարությունը: Կարևոր է նաև այն, որ տևական կամ կարճ ժամանակում Շուշին դառնում էր յուրատեսակ «ապաստան» առանձին մարտական ջոկատների, ինչպես նաև տեղահանված բնակիչների համար: Այսպես, տարբեր ժամանակներում Շուշիում հաստատվում էին սահմանամերձ բնակավայրերից տեղահանված տասնյակ ընտանիքներ, որոնց մի մասը հետագայում վերադառնում էր հարազատ բնակավայր, հաճախ նաև՝ ՀՀ և ՌԴ տարբեր քաղաքներ:

Բնական է, որ բնակչության խմբերի տեղաշարժերը, բնակչության հոսունությունը ազդում էին նաև քաղաքի բնակչության ժողովրդագրական կազմի ու վերջինիս կայունացման ընթացքի վրա: Այսպես 2000 թ. վիճակագրական տվյալներով 4 և ավելի անձից բաղկացած ընտանիքները կազմում էին քաղաքի բնակչության ընդամենը 34,4%-ը, մինչդեռ կայուն ժողովրդագրական իրավիճակն ու զարգացումները նույնպես կարևոր են քաղաքի զարգացման ու քաղաքային բնակչության և քաղաքային մշակույթի վերարտադրության տեսանկյունից:

Ներթնիկ խմբերի նման բազմազանությունը, զուգակցված ժողովրդագրական գործոնների, տնտեսական զբաղմունքների, սոցիալական, մշակութային ադապտացիայի այլ իրողությունների հետ, պայմանավորեց նաև քաղաքի «մշակութայինացման գործընթացի» առանձնահատկությունները:

Ի սկզբանե տիրապետող էին Շուշին որպես զուտ քաղաքային բնակավայր ու քաղաքային «օրգանիզմ» վերականգնելու մոտեցումները, ինչին ուղղված էին նաև տեղական ու հանրապետական իշխանությունների քայլերը: Սակայն շարունակվող պատերազմը, անբավարար ֆինանսները, քաղաքի ռազմավարական զարգացման հստակ ծրագրերի ու մոտեցումների բացակայությունը Շուշիի «մշակութայինացման» գործընթաց բերեցին այլ տարրեր: Այսպես, ազատագրված քաղաքում առաջինը կայուն տնտեսական դիրք գրավեցին գյուղատնտեսական զբաղմունքները, թեև դրանց հնարավոր-

րությունները սահմանափակ են: Շարունակում էին բավականին լուրջ մնալ ադապտացիայի խնդիրները:

Քաղաքային մշակույթի կայացումը բարդ ու տևական գործընթաց է: Այն ենթադրում է ոչ միայն քաղաքային մշակույթ կրող խմբերի, այլև քաղաքային մշակույթի վերարտադրության գործընթացի բավարար պայմանների առկայություն:

Մինչդեռ Շուշին, ըստ գրառված ազգագրական նյութերի, կայացավ հիմնականում ավանդական հայկական բնակավայրերին բնորոշ սկզբունքների կիրառմամբ՝ ազգակցական, դրացիական հարաբերությունների կարևորություն սոցիալական, մասնագիտական հատկանիշների հիմամբ շփումների համեմատությամբ, գյուղատնտեսական զբաղմունքներին տրվող նախապատվություններ, աշխատատեղերի սահմանափակություն, որոշ դեպքերում նաև՝ պարզապես քաղաքային մշակույթ զարգացնելու ցանկության բացակայություն, քանի որ բնակչության մի ստվար հատվածը լուծում է ընդամենը գոյության խնդիր: Այդ սկզբունքները կենսունակ են արտակարգ իրավիճակներում, քանի որ տալիս են դժվարությունները համատեղ ջանքերով համեմատաբար հեշտ հաղթահարելու հնարավորություններ: Իրականում դրանց մի մասը կարող է խոչընդոտել քաղաքի կայացման գործընթացները, քանի որ քաղաքի մարմինը «վերածնվում է» արտակարգ իրավիճակին ու վերջինիս պահանջներին համապատասխան:

Այսինքն՝ վերաբնակեցումը որպես հասարակական-մշակութային գործընթաց դիտելու դեպքում կարելի է արձանագրել, որ անցած 15 տարիների ընթացքում «մշակութայնացման» գործընթացները Շուշիում հիմնականում չեն ընթացել քաղաքային մշակույթի ձևավորման ու զարգացման ուղղությամբ, ինչն ունի և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Սրան չեն նպաստել նաև քաղաքում հաստատված և հիմնականում գոյամիջոցների ապահովման խնդիր լուծող որոշ խմբեր ու շերտեր:

Քաղաքային մշակույթի զարգացումը պահանջում է այն

կրող խմբերի «կրիտիկական զանգվածի» ապահովում: Եվ, վերջապես, կարևոր նշանակություն ունի այն, որ քաղաքային ենթակառուցվածքների մի մասն այսօր արդեն չունի քաղաքն սպասարկելու հնարավորություններ. ազատ, բնակության համար պիտանի բնակարանների թվի սահմանափակություն, ծանր վիճակում գտնվող ներքին ցանցեր և այլն: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Շուշիից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա է գտնվում մայրաքաղաք Ստեփանակերտը, որը, ի տարբերություն Շուշիի, խորհրդային շրջանում կայացել էր որպես հանրապետական նշանակության քաղաքային կենտրոն, իսկ պետության մայրաքաղաքի կարգավիճակում կարողացավ էլ ավելի ընդլայնել նման կենտրոնի իր գործառույթները:

Այսինքն՝ վերաբնակության առաջին փուլում առկա հակասությունը քաղաքին վերագրվող կարգավիճակի և վերաբնակության բուն գործընթացի միջև ավելի է խորացել: Վերաբնակիչների հիմնական մասը ցայսօր լուծում է ոչ թե քաղաքի «մշակութայնացման», այլ հիմնականում տարրական կենցաղային խնդիրներ, իսկ «քաղաքի մարմինն» աստիճանաբար կորցնում է քաղաքային նկարագիրն ու մշակութաստեղծ հնարավորությունները՝ վերածվելով գյուղաքաղաքի հատկանիշներ ունեցող բնակավայրի, ինչը, բնականաբար, սահմանափակում է առաջադրվող խնդիրների շրջանակը: Ստեղծված իրավիճակում առկա հիմնախնդիրների հաղթահարման համար կարևորագույն նշանակություն ունեն քաղաքի իրական հնարավորությունների գնահատումը, կարգավիճակի հստակեցումը, Շուշիի «մշակութաստեղծ» գործառույթները վերականգնելուն ուղղված համալիր հետևողական միջոցառումները, նաև պետական կառույցների գործունե մասնակցությամբ: